



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

<< ----->> << ----->> 2019թ.

N -----

**<<Հետաքննող լրագրողներ>>**  
**հասարակական կազմակերպության**  
**<<Հետք>> թերթի լրագրող Գ. Բալասանյանին**

*Հարգելի պարոն Բալասանյան*

Ի պատասխան Ձեր 2019 թվականի հուլիսի 11-ի և հուլիսի 12-ի հարցումներին, ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

«Հ կառավարության ծրագրով նախատեսվում է վարչատարածքային բարեփոխումները շարունակել 2019-2020թթ-ին և ներկայումս դրանից ավելի ստույգ ժամկետ հնարավոր չէ ներկայացնել: Պետք է լինի միացվող համայնքների ընդհանուր սահմանների առկայություն: Նոր ձևավորվող համայնքի կենտրոնը պետք է ունենա միավորվող համայնքների համար կենտրոնական դիրք, առնվազն 3 հազար բնակչի և անհրաժեշտ նվազագույն ծավալի ենթակառուցվածքներ: Նոր ձևավորվող համայնքների բնակավայրերի հեռավորությունը կենտրոնից չպետք է գերազանցի 20 կմ: Նոր ձևավորվող համայնքում պետք է առկա լինեն տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ նվազագույն ենթակառուցվածքներ (մանկապարտեզ, բուժ. կենտրոն, մշակույթի տուն (ակումբ), և միջնակարգ դպրոց):

Համայնքների միավորման արդյունքում «Հ Արմավիրի մարզում նախնական գնահատականով նախատեսվում է մոտ 20 խոշորացված համայնք, միավորման գործընթացի վերաբերյալ մարզում հանրային լուծումներ դեռևս չի իրականացվել:

Տեղեկացվում է նաև, որ 2019 թվականի հունիսի 21-ին «Հ Արմավիրի մարզպետարանում քննարկվել են համայնքների միավորման նախնական տարբերակները և նշված տեղեկատվությունը հրապարակված է «Հ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքէջում հետևյալ հղումով՝ <http://armavir.mtad.am/news/item/2019/06/21/21.06.193/>:

«Հ Արմավիրի մարզպետարանում համաձայն «Հ քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N436-Ն որոշման և «Հ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի «Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» N792-Ն որոշման, ժամկետային աշխատանքային պայմանագրով համալրված են հետևյալ պաշտոնները.

«Հ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետ՝ պաշտոնակատար Աշոտ Գվիդոնի Հովհաննիսյան, պաշտոնավարում է 2018 թվականի օգոստոսի 16-ից,

«Հ Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ՝ պաշտոնակատար, Սոնյա Աշոտի Բուդաղյան, պաշտոնավարում է 2018 թվականի հունիսի 29-ից,

«Հ Արմավիրի մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ՝ պաշտոնակատար Լիաննա Ռուբենի Հարությունյան, պաշտոնավարում է 2018 թվականի սեպտեմբերի 6-ից,

«Հ Արմավիրի մարզպետարանի Վաղարշապատի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետ՝ պաշտոնակատար Արմեն Աղասու Դավթյան, պաշտոնավարում է 2018 թվականի օգոստոսի 22-ից:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշմամբ սահմանված կարգի 68-րդ կետի համաձայն՝ նոր չափանիշներով 0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

գնահատված և դասակարգված քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելուց և նոր պաշտոններում քաղաքացիական ծառայողների վերանշանակումներից հետո միայն համապատասխան մարմնի պաշտոնների անվանացանկում առկա թափուր պաշտոններն զբաղեցնելու համար կհայտարարվեն մրցույթներ:

Մարզի բնակիչ չհանդիսացող մարզպետարանի աշխատակիցների որևէ բնակավայրից աշխատանքի հաճախելու վերաբերյալ տեղեկատվությանը մարզպետարանը չի տիրապետում, և առկայության դեպքում իրավասու չէ տրամադրել, քանի որ այն պարունակում է մարդու անձնական կյանքի գաղտնիությունը բացահայտող հատկանիշներ: Հետևաբար, Ձեր նշված հարցմամբ պահանջվող տեղեկատվության տրամադրումը ենթակա է մերժման՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով:

Առ 22.05.2019 թվականի դրությամբ ՀՀ Արմավիրի մարզպետարանի հաշվեկշռում առկա է եղել թվով 8 ծառայողական ավտոմեքենաներ: ՀՀ Վարչապետի հանձնարարականով ՀՀ Արմավիրի մարզպետարանի թվով 4 ծառայողական ավտոմեքենաներ հանձնվել են ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը՝ դրանք աճուրդային եղանակով օտարելու նպատակով: Մարզպետարանի թվով 4 ծառայողական մեքենաները ամրացված են հետևյալ պաշտոնատար անձանց.

1. TOYOTA LC-150 մակնիշի 055 LL 55 պետհամարանիշի ՀՀ Արմավիրի մարզպետի ծառայողական ավտոմեքենան (նյութական պատասխանատու անձ Խաչիկ Ինջյան)
2. NISSAN PATHFINDER մակնիշի 876 LL 11 պետհամարանիշի ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալ (նյութական պատասխանատու անձ Կարեն Գրիգորյան)
3. NISSAN TIIDA մակնիշի 638 LL 70 պետհամարանիշի ՀՀ Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար (նյութական պատասխանատու անձ՝ Վարդան Վարդազարյան)
4. DAEWOO MATIZ M08 մակնիշի 252 LT 28 ՀՀ Արմավիրի մարզպետարանի ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության և ՀՀ Արմավիրի մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժիններ (նյութական պատասխանատու՝ Գեղամ Իսկանդարյան):

Տեղեկացվում է նաև, որ վերը նշված ավտոմեքենաների ամսական կտրվածքով ծախսը սահմանափակվել է միայն հատկացված բենզինի հետևյալ չափականակով.

- TOYOTA LC-150 մակնիշի 055 LL 55 պետհամարանիշի ավտոմեքենային - 600 լիտր,
- NISSAN PATHFINDER մակնիշի 876 LL 11 պետհամարանիշի ավտոմեքենային - 160 լիտր,
- NISSAN TIIDA մակնիշի 638 LL 70 պետհամարանիշի ավտոմեքենային -160 լիտր,
- DAEWOO MATIZ M08 մակնիշի 252 LT 28 պետհամարանիշի ավտոմեքենային - 40 լիտր:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի սպասարկման ներքո գտնվող թվով 3 ծառայողական ավտոմեքենաները, բացառությամբ ՀՀ Արմավիրի մարզպետին ամրացված ծառայողական ավտոմեքենայից, օգտագործվում են նաև մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցների ծառայողական պարտականությունները իրականացնելու նպատակով՝ մարզի համայնքներ, ինչպես նաև այլ համայնքներ գործուղելու համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ Արմավիրի մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումներին վերապահված գործառույթների արդյունավետ իրականացման համար առաջիկայում մարզպետարանում իրականացվելիք կառուցվածքային փոփոխությունների արդյունքում նախատեսվում է նշված ավտոմեքենաները օգտագործել որպես հերթապահ տրանսպորտային միջոցներ:

**Հարգանքով՝**

**Հ. Մաթևոսյան**

7/18/2019

VERIFIED OCSP 7/18/2019 17:55:45 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

- Կատարող՝ Ա. Ղուկասյան
- Վ. Մկրտչյան
- Դ. Դավթյան
- Ն. Մարտիրոսյան

